Հաշվետվություն

2018թ. փետրվարի 14-ից 16-ը Սոչի քաղաքում կայացած Ռուսաստանի ներդրումային գիտաժողովի մասնակցության

1. **Անունը, ազգանունը.**

   Դավիթ Տոնոյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար,

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն, քաղաք Սոչի, 2018թ. փետրվարի 14-ից 16-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Սոչի քաղաքում կայացած Ռուսաստանի ներդրումային համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

   ՌԴ արտակարգ իրավիճակների նախարար Վլադիմիր Պուչկովի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

   - Արտակարգ իրավիճակների ոլորտում հայ-ռուսական համագործակցության խորացման հնարավորությունները՝ Հայ-ռուսական հումանիտար արձագանքման կենտրոնի կարողությունների հզորացման միջոցով:
   - Տեխնիկական աջակցության և վերազինման գործընթացի խթանման հարցը:
   - Արտակարգ իրավիճակներում կանխարգելիչ և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ փորձի փոխանակման և կադրերի վերապատրաստման հնարավորությունները:

- Քննարկման ընթացքում շեշտը դրվեց երկու գերատեսչությունների համագործակցության, ինչպես նաև՝ աղետներին համատեղ դիմակայելու և արձագանքելու կարևորությանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   - Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում անցկացվող Ներդրումային ռուսական 17-րդ համաժողովի մասնակցության շրջանակներում երկկողմանի աշխատանքային հանդիպում եմ ունեցել ՌԴ արտակարգ իրավիճակների նախարար Վլադիմիր Պուչկովի հետ:
   - Այցելել եմ Սոչիի կայազորի պատմության թանգարան:
   - Այցելել եմ ՌԴ ներդրումային համաժողովի անվտանգ աշխատանքն ապահովող ԱԻՆ օպերատիվ շտաբ և Ճգնաժամային իրավիճակների կառավարման կենտրոնի Սոչիի մասնաճյուղ:
   - Այցելել եմ ՌԴ ԱԻՆ Հարավային շրջանի որոնողափրկարարական ջոկատ:
   - Այցի շրջանակներում պատրաստվել է զեկույց «Развитие частно–государственного партнерства как основа привлечения частных инвестиций в сферу управления рисками бедствий в Армении» թեմայով, որը ներկայացվել է համաժողովի քարտուղարությանը (զեկուցումը կցվում է):
8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

   Իմ կողմից Վ. Պուչկովը հրավիրվել է մասնակցելու Սպիտակի երկրաշարժի օրվա հիշատակմանը նվիրված «Դիմակայուն Հայաստան» խորագրի ներքո անցկացվող միջոցառումներին, որոնք կկայանան սույն թվականի դեկտեմբերի 6-ից 8-ը:
9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

   ՌԴ ԱԻ նախարար Վ. Պուչկովը առաջարկեց մասնակցել սույն թվականին կայանալիք «Համալիր անվտանգություն-2018» (Комплексная безопасность –

2018) միջոցառմանը, որի ընթացքում հանրությանն են ներկայացվելու փրկարարական աշխատանքների համար նախատեսված տեխնիկական միջոցների նորարարությունները:

Վ. Պուչկովի կողմից ևս մեկ անգամ հիշատակվեց հաջորդ տարի Իրկուտսկում անցկացվող Հրշեջների և փրկարարների միջև Ուժային բազմամարտի բաց առաջնության եզրափակչի մասնակցության հրավերի մասին:

10. Գործուղվողը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Դավիթ Տոնոյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

19.02.2018թ.